Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 26th October 2025 Bulletin 45/2025

Seventh Sunday of the Exaltation of the Holy Cross—Discovery of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:18-24

Արդարեւ խաչին քարոզութիւնը յիմարութիւն է անոնց համար՝ որ կը կորսուին, իսկ մեզի համար՝ որ փրկուած ենք՝ Աստուծոյ զօրութիւնն է:

Որովհետեւ գրուած է. «Իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսնցնեմ, ու խելացիներուն խելքը պիտի ջնջեմ»:

Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր է դպիրը, ո՞ւր է այս աշխարհի վիճաբանողը. միթէ Աստուած չյիմարացո՞ւց այս աշխարհի իմաստութիւնը: Արդարեւ՝ քանի աշխարհը իր իմաստութեամբ չճանչցաւ Աստուած՝ անոր իմաստութեան մէջ, Աստուած բարեհաճեցաւ քարոզութեան յիմարութեամբ փրկել անո՛նք՝ որ կը հաւատան. որովհետեւ Հրեաները նշան կը պահանջեն, եւ Յոյները իմաստութիւն կը փնտռեն, իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը, գայթակղութիւն՝ Հրեաներուն, ու յիմարութիւն՝ Յոյներուն. բայց անոնց որ կանչուած են, թէ՛ Հրեաներուն եւ թէ Յոյներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը.

Paul Writes to Corinthians

The Epistle of St Paul to the 1 Corinthians 1:18-24;

Christ Crucified Is God's Power and Wisdom

For the message of the cross is foolishness to those who are perishing, but to us who are being saved it is the power of God.

For it is written: "I will destroy the wisdom of the wise; the intelligence of the intelligent I will frustrate." c

Where is the wise person? Where is the teacher of the law? Where is the philosopher of this age? Has not God made foolish the wisdom of the world? For since in the wisdom of God the world through its wisdom did not know him, God was pleased through the foolishness of what was preached to save those who believe. Jews demand signs and Greeks look for wisdom, but we preach Christ crucified: a stumbling block to Jews and foolishness to Gentiles, but to those whom God has called, both Jews and Greeks, Christ the power of God and the wisdom of God.

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24:27-36

Քանի որ ինչպէս փայլակը կ'ելլէ արեւելքէն ու կ'երեւնայ մինչեւ արեւմուտք, ա՛յնպէս պիտի ըլլայ մարդու Որդիին գալուստը: Որովհետեւ ո՛ւր որ դիակ կայ, հո՛ն պիտի հաւաքուին արծիւները»:

«Եւ այդ օրերու տառապանքէն անմի՛ջապէս ետք՝ արեւը պիտի խաւարի ու լուսինը պիտի չտայ իր փայլը. աստղերը պիտի իյնան երկինքէն, երկինքի զօրութիւնները պիտի սարսին, եւ ա՛յն ատեն մարդու Որդիին նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ: Այն ատեն երկրի բոլոր տոհմերը պիտի հեծեծեն, ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ կու գայ երկինքի ամպերուն վրայ, զօրութեամբ ու մեծ փառքով: Եւ ան պիտի ղրկէ իր հրեշտակները բարձրաձայն փողով, ու պիտի հաւաքեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը»:

«Թզենիէ՛ն սորվեցէք առակ մը. երբ անոր ոստերը կակուղնան եւ տերեւները ցցուին՝ կը հասկնաք թէ ամառը մօտ է: Նո՛յնպէս դուք՝ երբ տեսնէք այս բոլոր բաները, գիտցէ՛ք թէ մօտ է՝ դռներուն քով: Ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. "Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս բոլոր բաները ըլլան": Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնա՛ւ պիտի չանցնին»:

«Իսկ այդ օրն ու ժամը՝ ո՛չ մէկ մարդ գիտէ, ո՛չ ալ երկինքի հրեշտակները, հապա՝ միա՛յն իմ Հայրս:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 24:27-36

For as lightning that comes from the east is visible even in the west, so will be the coming of the Son of Man. Wherever there is a carcass, there the vultures will gather.

"Immediately after the distress of those days " 'the sun will be darkened, and the moon will not give its light; the stars will fall from the sky, and the heavenly bodies will be shaken.' b

"Then will appear the sign of the Son of Man in heaven. And then all the peoples of the earth c will mourn when they see the Son of Man coming on the clouds of heaven, with power and great glory. d And he will send his angels with a loud trumpet call, and they will gather his elect from the four winds, from one end of the heavens to the other.

"Now learn this lesson from the fig tree: As soon as its twigs get tender and its leaves come out, you know that summer is near. Even so, when you see all these things, you know that it e is near, right at the door. Truly I tell you, this generation will certainly not pass away until all these things have happened. Heaven and earth will pass away, but my words will never pass away.

The Day and Hour Unknown

"But about that day or hour no one knows, not even the angels in heaven, nor the Son, f but only the Father.

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

Տասներկու սուրբ վարդապետների՝ Ռեթեոսի, Դիոնիսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կյուրեղ Երուսաղեմացու, Եփրեմ Խուրի Ասորու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Աստվածաբանի, Եպիփան Կիպրացու, Հովհան Ոսկեբերանի և Կյուրեղ Այեքսանդրացու հիշատակության օր

Այս հայրերը կամ վարդապետները եղել են առաքինի կյանքով ու նկարագրով հռչակված անձնավորություններ, որոնք Եկեղեցու կողմից դասվել են սրբերի կարգը և ճանաչվել որպես Ընդհանրական Եկեղեցու մեծ հայրեր, Սուրբ Գրքի հեղինակավոր մեկնիչներ, քրիստոնեական հավատի ուղղափառ ավանդապահներ: Տասներկու վարդապետների գործունեության կարևորագույն առանցքն ուղղափառ հավատի պահպանությունն ու անաղարտ փոխանցումն էր սերունդներին: Քրիստոնեության հիմնադրման օրվանից իսկ գոյություն են ունեցել հերետիկոսություններ, հերձվածներ, որոնց հետևորդները, սխալ ընկալելով ու մեկնաբանելով Աստծո խոսքը, զարգացրել են թյուր պատկերացումներ և մոլար ուսմունքներ՝ կապված քրիստոնեական վարդապետության հիմնարար սկզբունքների հետ: Բայց ի հակադրություն նրանց՝ եկեղեցու տասներկու վարդապետները, ամբողջության մեջ ըմբռնելով աստվածային հայտնությունը, տվել են վարդապետական առանցքային դրույթների և սկզբունքների ճշգրիտ մեկնությունը՝ ուղղափառության սահմանների մեջ զարգացնելով եկեղեցական աստվածաբանությունը: Տասներկու վարդապետների դերն ու նշանակությունն այսօր առավել քան երբևէ կարևոր է մեր հասարակության համար, որտեղ ներթափանցել են Սուրբ Գրքի կամայական մեկնիչներ, ովքեր Աստծո խոսքի՝ իրենց ոչ ճիշտ ընկալումներն ու պատկերացումները պատվաստում են մեր ժողովրդի զավակների մտայնության մեջ՝ հեռացնելով նրանց ոչ միայն իրական, ճշմարիտ փրկության ճանապարհից, այլև մեր ազգային գիտակցությունից, Աստվածաշունչ մատյանի ուղղափառ մեկնությամբ ձևավորված մտածողությունից, դրանով իսկ նաև ազգային դիմագծից ու նկարագրից:

Ուստի, այս տոնը մեզ համար ևս մեկ պատեհ առիթ է՝ արժևորելու մեր նախնյաց թողած հարուստ ժառանգությունը՝ հավատարիմ մնալով մեր Եկեղեցուն և Քրիստոսի Եկեղեցու Ս. Հայրերի լույս հավատքին: Հայ Առաքելական Ս. Եկեղեցին տասներկու Ս. Վարդապետների խնկելի հիշատակը ոգեկոչում է Խաչվերացի 6-րդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը:

Commemoration of the Twelve Archimandrites – Sts. Retheos, Dionisios, Selbestros, Athanas, Cyril of Jerusalem, Ephrem Khourie Assyrian, Vasil (Barsegh) of Caesaria, Gregory of Nyssa, Gregory the Theologian, Epiphan of Cyprus, John Chrysostom and Cyril of Alexandria

Those Archimandrites (Holy Doctors) or Church Fathers (Hierotheus of Athens, Dionysius of Areopagite, Silverst of Rome, Athanasius of Alexandria, Cyril of Jerusalem, Ephraem the Syrian, Barsegh (Vasil) of Caesaria, Gregory of Nyssa, Gregory of Nyssa, Gregory the Theologian, Epiphanius of Cyprus, John Chrysostom and Cyril of Alexandria) have been famous for leading a pious and devote life and are considered to be the Fathers of the Universal Church, respectable interpreters of the Holy Bible and orthodox maintainers of the Christian Faith.

The main goal of the twelve Church Fathers' activity was maintenance and passing to the coming generations the orthodox faith Heresies and sects and their followers have existed since the existence of Christianity. They have falsely comprehended and interpreted the Word of God, have set forth and developed false and misleading teachings related to the fundamental principles of Christianity. In contrast to them, the twelve Church Fathers, comprehending the divine revelation in the whole, have provided the true interpretation of the doctrinal key points and principles and have developed ecclesiastical theology. The role of the twelve Church Fathers is at present especially important for our society, where various false interpreters of the Holy Bible have intruded.

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Տոն Խաչի Գյուտի

Խաչի Գյուտը Քրիստոսի խաչափայտին նվիրված չորս տոներից է:

327 թվականին բյուզանդական Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Հեղինեն, Տիրոջ խաչը գտնելու նպատակով այցելում է Երուսաղեմ: Հուդա անունով մի հրեա օգնում է կայսրուհուն գտնել Քրիստոսի խաչվելու վայրը՝ Գողգոթան, որտեղ որոնումների արդյունքում հայտնաբերվում են Հիսուսի և նրան խաչակից երկու ավազակների խաչերը:

Տիրոջ խաչը ճանաչելու համար մի պատանու դիակ հերթով դնում են դրանց վրա, որոնցից մեկի վրա պատանին հարություն է առնում, և այդպես ճանաչվում է տերունական խաչը: Այդ հրաշքից հրեա Հուդան քրիստոնեություն է ընդունում և հետո դառնում է Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսը: Խաչափայտի գյուտից հետո Հեղինեն բարեզարդում է Երուսաղեմի սրբազան վայրերը, իսկ Գողգոթայում կառուցում Ս. Հարություն եկեղեցին, որտեղ հետագայում զետեղվում է Տիրոջ խաչափայտը:

Խաչի առաջին գյուտը

Երբ մեր Տերն ամբողջացրեց Իր փրկական տնօրինությունները և համբարձվեց երկինք, փրկական Խաչն անխնամ մնաց Գողգոթայում՝ իբրև դատապարտության և մահվան գործիք: Եվ գարնանը, երբ բույսերը ծաղկում են, ու մանուկներն իրենց սովորության համաձայն խաղում դալար խոտի վրա, մի կաղ մանուկ, իր ընկերների հետ խաղալիս, հանկարծ դիպչում է կենարար Խաչափայտին, ինչից ամրանում են նրա ոտքերը, և նա անմիջապես սկսում է վազել և օրհնել Աստծուն ու գոհանալ կենսակիր նշանից: Այդ դեպքն առիթ հանդիսացավ, որպեսզի Խաչի համբավը տարածվի, և կաղերը, կույրերը, բորոտներն ու առհասարակ բոլոր հիվանդները բժշկվեն Խաչափայտի միջոցով: Դրանից հետո Հակոբոս Տյառնեղբայրը Խաչափայտը վերցրեց իր մոտ:

Ս. Խաչի գյուտով հավատացյալները ուրախացան, իսկ անհավատները հույժ տրտմեցին: Իսկ հրեաները, ովքեր կամովին իրենցից հեռացրեցին ճշմարիտ Լույսից, գլխահակ դարձան, որոնց մասին Եսային ասում է. «Ո՞վ է կույրը, եթե ոչ Իմ ծառաները, ովքե՞ր են խուլերը, եթե ոչ այն մարդիկ, որ տիրում են նրանց» (Եսայի 2:19): Հրեաները, տեսնելով Խաչի սքանչելագործությունները, նախանձից այրվելով՝ Հակոբոսից հափշտակեցին Խաչափայտը և դրեցին Երուսաղեմի տաճարի Գեղեցիկ կոչվող դռան մոտ, որտեղ մի անդամալույծ էր մշտապես նստում՝ ողորմություն խնդրելու համար:

Մի օր, երբ անդամալույծը երկար նստելուց նիրհում էր, Ս. Խաչի զորությունից հանկարծակի արթնանում է և ամբողջովին բժշկված՝ տեղից վեր թռչում՝ փառաբանելով Քրիստոսին: Ապա մի բորոտ է բժշկվում՝ ամբողջովին իր վրայից թափելով ապականված մորթը և գոհություն հայտնում աստվածընկալ Ս. Խաչին: Այդ տեսնելով՝ հրեաները Ս. Խաչը տանում են ու դնում Տիրոջ գերեզմանի մեջ և մի վեմով փակում: Սակայն վեմի ճեղքերից հրաշալի լույս է ելնում ու բժշկում այն նեղյալներին, ովքեր այցելում էին Տիրոջ գերեզմանին:

Այս անգամ հրեաները Աֆրոդիտեի պատկերն են կանգնեցնում վեմի վրա, որպեսզի ժողովուրդը կարծի, թե Աֆրոդիտեն է նրանց բժշկում:

Այդ օրերին Ս. Պետրոս առաքյալի միջոցով հավատի է գալիս Կլավդիոս կայսեր կինը՝ Պատրոնիկեն, ով մեծ հույսով իր որդիների ու դուստրերի հետ Հռոմից գալիս է Երուսաղեմ՝ երկրպագելու տերունական վայրերին: Թագուհին այնտեղ շրջելուց հետո, Հակոբոս Տյառնեղբոր ընկերակցությամբ այցելում է Տիրոջ գերեզմանին և այն մաքրելուց, բացելուց և կարգի բերելուց հետո այնտեղ գտնում է Տիրոջ Աստվածընկալ Խաչափայտը՝ դրված ավազակների խաչափայտերի հետ միասին: Այն պահին, երբ տիկինն ուրախացած մտնում է Տիրոջ հարության վայրը, նրա դուստրերից մեկը հանկարծամահ է լինում: Սուրբ Հոգու ազդեցությամբ նրանք մահացածի վրա հաջորդաբար դնում են խաչափայտերն ու աղոթում: Երբ մահացածի վրա դնում են Տիրոջ Խաչափայտը, արքայադուստրն անմիջապես կենդանանում է, և ներկաները, տեսնելով հրաշքը, խոնարհվում են ու երկրպագում կենարար խաչափայտին: Այսպիսով՝ երեք խաչափայտերից գտնվում է այն, որը պատկանում էր Տիրոջը: Ապա թագուհին խաչափայտը հանձնում է Հակոբոս Տյառնեղբորը և փոխարենը կենարար փայտից մի մասունք խնդրում, որը գոհությամբ վերցնելով՝ գնում է Հռոմ:

Հակոբոս Տյառնեղբայրը Խաչափայտը պահում է եկեղեցում և Ծաղկազարդի տոնից սկսած մինչև սեպտեմբերի 14-ը, ամեն կիրակի՝ առավոտյան և երեկոյան, այն դուրս է բերում, բարձրացնում ու ասում. «Խաչի Քո Քրիստոս երկիր պագանեմք...»: Որից հետո խաչափայտը դրվում էր եկեղեցու սրբարանում՝ մինչև հաջորդ Ծաղկազարդը: Կլավդիոս կայսեր վախճանվելուց հետո իշխանությունն անցնում է Ներոնի ձեռքը, ով հալածանքներ է

սկսում Տիրոջ Եկեղեցու դեմ: Հրեաներն էլ, օգտվելով առիթից, սպանում են Հակոբոս Տյառնեղբորը և Խաչափայտը թաղում Գողգոթայի վրա, մի խոր փոսի մեջ, և այդ տեղը վերածում աղբանոցի: Խաչափայտն այդտեղ մնում է շուրջ երեք հարյուր տարի՝ մինչև Կոստանդիանոս բարեպաշտ կայսեր ժամանակները, երբ Եկեղեցին խաղաղություն է գտնում:

Խաչի երկրորդ գյուտը

Երեք հարյուր տարի անց Հեղինե թագուհին՝ Կոստանդիանոս կայսեր մայրը, տեսիլքով Աստծուց հրաման է ստանում գնալ Երուսաղեմ, փնտրել ու գտնել Քրիստոսի Խաչափայտը և տնօրինական վայրերում տաճարներ կառուցել: Հեղինեն տեսիլքը պատմում է Կոստանդիանոսին և նրան հայտնում Աստծո հրամանը: Կայսրը հոժարությամբ ու մեծ հավատով ընդունում է մոր խոսքերը, միջոցներ է տրամադրում այդ գործն իրականացնելու համար և թագուհուն՝ մեծ շքախմբով ու բազում օգնականներով, ճանապարհում Երուսաղեմ: Գալով Երուսաղեմ, թագուհին քաղաքը գտնում է ավերված ու թալանված, այնպես, ինչպես մարգարեացել էր Եսային. «Ձեր երկիրն ավերակ է, ձեր քաղաքները՝ հրո ճարակ, թշնամի ցեղերից ավերված ու ամայացած, ձեր հողի բարիքները ձեր իսկ աչքի առաջ օտարներն են ուտում: Սիոնի դուստր Երուսաղեմը պիտի մնա լքված, ինչպես տաղավարը՝ այգում, մրգապահների հյուղակ՝ սեխի պարտեզում, ինչպես պաշարման մեջ գտնվող քաղաքը» (Եսայի 1:8): Երբ 70 թ. հռոմեական զորքերն ավերեցին Երուսաղեմը և հիմնահատակ քանդեցին տաճարը, սովից ու պատերազմներից մեկ միլիոնից ավելի հրեաներ կոտորվեցին, իսկ մնացածն էլ գերվեցին և ցրվեցին աշխարհով մեկ: Այդ օրերին Երուսաղեմն արդեն չուներ իր նախկին փառքը: Բացի այդ 64 թվականից սկսած մինչև 313 թվականը՝ մինչև Կոստանդիանոս Մեծի գահակալության երկրորդ տարին, մեծ հալածանքների ենթարկվեց Քրիստոսի Եկեղեցին: Հրեաներն ու հեթանոսները, չհանդուրժելով քրիստոնյաների մատուցած պաշտամունքը Խաչյալին, ամեն կերպ ցանկանում էին աշխարհի երեսից վերացնել Տիրոջ փառքը հիշեցնող ամեն ինչ, որպեսզի դրանով իսպառ ջնջեն Նրա հիշատակը: Այդ պատճառով էլ նրանք թաքցրեցին Տիրոջ Խաչափայտը՝ ավազակների երկու խաչափայտերի հետ միասին թաղելով այն աղբակույտի տակ:

Այդ օրերին Երուսաղեմում միայն Հուդա անունով մեկը գիտեր խաչի գտնվելու վայրը՝ տեղյակ լինելով իր նախնիների գրավոր ավանդություններից: Սակայն նա չէր ցանկանում հայտնել և թագուհու խնդրանքներին ու հորդորներին անտարբեր էր վերաբերում, մինչև որ թագուհին ճարահատյալ բանտարկում է նրան:

Հուդան ի վերջո հայտնում է Խաչափայտի տեղը, և թագուհին ձեռնարկում է Խաչափայտի որոնումները Գողգոթայի վրա: Խաչափայտը բավականին խորն էր թաղված հողի տակ, ինչը մեծ աշխատանք և շատ ժամանակ էր պահանջում որոնողներից: Սակայն Աստծո շնորհով թագուհին գտնում է երեք խաչափայտներն էլ և անգամ՝ Պիղատոսի ձեռքով գրված եռալեզու տախտակը: Թագուհին, գտնելով Խաչափայտը, տրտմում է, քանի որ չի կարողանում զանազանել, թե այդ երեք խաչափայտերից որն էր տերունականը: Սակայն Երուսաղեմի պատրիարք Մակարիոս եպիսկոպոսը հավատով լուծում է խնդիրը և փարատում թագուհու տրտմությունը: Նա աղոթքով Աստծուց նշան է խնդրում, թե որն է Սուրբ Խաչը, և հրաշքը չի ուշանում: Մի կին երկարատև հիվանդությունից հետո մահամերձ վիճակում էր: Մակարիոս եպիսկոպոսը հավատում է, որ Տիրոջ խաչը, որի վրա թափվել է Նրա Արյունը, կառողջացնի այդ կնոջը, եթե նրան մոտեցնեն Խաչափայտին: Առաջին երկու խաչերը, որոնք ավազակներինն էին, կնոջը ոչ մի օգուտ չեն տալիս, սակայն երբ նրան հպում են Տիրոջ Խաչին, կինը լիովին առողջանում է, ոտքի կանգնում և Աստծուն փառք տալիս:

Այնուհետև այդ Խաչի միջոցով, որով Տերը հաղթեց մահին և ավերեց դժոխքը, հարություն առավ մի պատանի, և էլի բազում հրաշքներ կատարվեցին, ինչը տեսնելով՝ շատ հրեաներ դարձի եկան ու մկրտվեցին: Հուդան էլ, ով ցույց էր տվել խաչափայտի գտնվելու տեղը, իր ցեղակիցների հետ մկրտվեց և անվանվեց Կյուրեղ*, մեծ շնորհների արժանացավ ու հասավ եպիսկոպոսի աստիճանի: Հետագայում նա Տիրոջ անվան համար նահատակվեց՝ արժանանալով մարտիրոսական պսակի:

* Սա այն Կյուրեղն է, ում հիշատակում ենք Մեծի պահոց երկրորդ շաբաթ օրը, և տոնացույցում նա անվանվում է «մյուս Կյուրեղ», որպեսզի չշփոթենք Կյուրեղ Երուսաղեմացու հետ: Ըստ ավանդության՝ այդ Հուդա-Կյուրեղը Ս. Ստեփանոս Նախավկայի ցեղից էր:



Dear Armenian Community Members and St Yeghiche Armenian Church Parishioners,

We are pleased to inform you that the choir of St Yeghiche Armenian Church under the leadership of Maestro Aris Naderian will take part in the Celebration of the establishment of the Christian Creed in 325 A.D. and 1700 Anniversary of the Ecumenical Council of Nicaea on 8th November 2025 at Catholic Church of Saint James, 22 George Street London W1U 3QY.

Tickets to the above is available at the St Yeghiche Armenian Church, please ask one of the Parish Council member at the entrance for your copy.

We hope to see as many of you to this special event. **Thank You**

St Yeghiche Armenian Church Parish Council

Սիրո դավանություն



«**Վարդապե՛տ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ**»: Եւ Նա նրան ասաց. «**Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես ընթերցում**»: Սա պատասխանեց եւ ասաց. «**Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով եւ քո ամբողջ հոգով եւ քո ամբողջ զորությամբ եւ քո ամբողջ մտքով. եւ պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը**»: (Ղուկ. 10: 25-27)

Աստծո սերը փրկություն է, եւ Աստծուն սիրելով միայն մարդ կարող է իրական սիրով սիրել իր նմանին, քանզի մարդկային սերը շահախնդիր է, պակասող, իսկ աստվածայինը՝ անշահախնդիր եւ ավելացող:

Announcement

Organist / Keyboard Player Required

St Yeghiche Armenian Church Parish is looking to engage an enthusiastic Organist / Keyboard player to assist and enhance our Sunday Divine Liturgy and its glorification of our Lord.

The position entails playing on Sunday's Divine Liturgy, and other religious events throughout the Year.

Fees by negotiation – Immediate start

If interested please contact
Choirmaster Mr Aris Nadirian or
Parish Council Chairman Mr Viken Haladjian
by calling 020 73738133 or by emailing to
info@styeghiche.org.uk

The Church organ is the second largest in the country, lavishly carved and decorated with prefigures of Gothic architecture. It is noteworthy that Sir Arthur Seymour Sullivan, illustrious English composer was the first organist at St Yeghiche Armenian Church (previously known as St. Peter's Church) who played the first version of the existing organ from 1867 to 1871. .



Remembrance Day at Canterbury Cathedral

Dear Armenian Community Members and St Yeghiche Armenian Church Parishioners,

On Tuesday 11th November 2025, Rev Fr Nshan Alaverdyan together with members of Armenian Community Council and St Yeghiche Armenian Church Parish Council Members, will be offering a special Remembrance service at the Armenian Khachkar in the Memorial Garden of Canterbury Cathedral.

You are all invited to attend and support.

Thank You

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Քանզի օրհնեալ է այն փայտը, որով արդարութիւն է լինում, եւ անիծեալ է ձեռակերտ կուռքը…» (Իմաստ. 14:7):

Քրիստոսասէր բարեկամներ,

Սուրբ Խաչի Գիւտի տօնն է: Մարդկութեան պատմութեան մէջ թերեւս ոչ ոքի կերպարն այդքան հակասական մեկնաբանութիւնների տեղքի չի տուել, որքան եբրայեցիներից իբրեւ հիւսնի որդի ընդունուած եւ միաժամանակ Աստծոյ Միածին Որդի եղող Յիսուս Քրիստոսի անձը: Նոյն հակասականութեան սկզբունքը կարելի է տեսնել քրիստոնէութեան ամենաճանաչուած խորհրդանիշի՝ խաչի դէպքում: Հռոմէացիների համար՝ յանցանքի, պատժի ու մահուան նշան, Քրիստոսի հետեւորդների համար՝ փրկութեան եւ յարութեան խորհրդանիշ. «որովհետեւ կորստեան մատնուածների համար խաչիի քարոզութիւնը յիմարութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներիս համար՝ Աստծոյ զօրութիւն» (Ա.Կորնթ. 1:18):

Խաչի նշանի շուրջ եղած տարակարծութիւնները չեն վերացել, այլ նոր մեկնութիւններով եւ նոր սահմանումներով են առկա մեր կեանքում:
Անգամ շատ կրոնական խմբեր, որ ներկայանում են իբրեւ քրիստոնեաներ, մերժում են խաչը կամ խաչի աւանդական ընկալումը՝ խաչի նկատմամբ խոնարհում ու պաշտամունք ունեցողներին նոյնիսկ կռապաշտ կոչելու աստիճան: Այս վերաբերմունքն տրտմեցրել է առաքեալներին քարոզութեան դեռ առաջին իսկ շրջանից. *«Որովհետեւ շատերը, որոնց մասին շատ անգամ ասել եմ ձեզ և այժմ էլ լալով եմ ասում, ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի խաչի»* (Փիլիպ. 3:18):

Թերեւս կարեւորագոյն հարցն այն ճշմարտութեան ընդունումն է, որ խաչելութիւնը պատահաբար ընտրուած չէր, եւ դեռ դարեր առաջ Սուրբ Խաչի մասին մարգարէութիւններ կան, որ Աստծոյ յայտնութեան շրջանակում է Սուրբ Խաչի ընկալումն ու փառաբանութիւնը: Մնացեալ բոլոր տարակարծութիւնները գալիս են մարդկային կերպով ընկալելուց եւ մեկնաբանելուց՝ հաշուի չառնելով այն, որ Քրիստոսի Խաչափայտի միջոցով եւ ընդհանրապէս խաչակնքումով Աստուած բազմապիսի կերպերով Իր խնամքը, բժշկութիւնը, սէրն է շարունակաբար յայտնել եւ յայտնում մեզ:

Խաչի գիւտն էլ ուղեկցուել է նման յայտնութիւններով: Ընդհանրապէս խաչի նկատմամբ յարգանքը, սէրը, խոնարհումը եւ երկրպագութիւնը արդիւնք եւ հետեւանք են այս յայտնութիւնների: Ըստ պատմական վկայութիւնների՝ առաջին իսկ դարից, երբ խաչափայտի միջոցով պատահաբար դիպչելով բժշկւում է կաղ երեխան, երբ յարութիւն է առնում Պատրոնիկէ կայսրուհու յանկարծամահ դուստրը, երբ Տաճարի դռանը նստած անդամալոյծն է ապաքինւում, Խաչափայտի մէջ տեսանելի եւ զգալի կերպով գործում է Խաչեալի փրկարար զօրութիւնը:

Քրիստոսին մերժող եւ խաչող հրէաները նոյն անյանդուրժող վերաբերմունքն ունեցան խաչի նկատմամբ՝ թաքցնելով, գերեզմանի այրում պահելով, աղբանոցում հողով ծածկելով: Բայց ամէն անգամ Սուրբ Խաչը գտնուեց՝ պատճառ դառնալով նոր հրաշքի ու բժշկութեան՝ առաւել փառաւորուելով: Պարսիկների մօտ գերի տարուած վիճակն անգամ ծառայեց այնտեղ Խաչի եւ Խաչեալի ճանաչմանը, սրտով ու կեանքով հաւատալուն, անգամ արեամբ հաւատարմութիւնը վկայելուն՝ կրկնելով Պօղոս առաքեալի խօսքը. *«Քաւ լիցի, որ ես մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչից զատ մի այլ բանով պարծենամ»* (Գաղ. 6:14)

Ցանկացած քրիստոնեայ հաւատում է, որ Աստուած մեր մէջ գործում է Սուրբ Հոգով: Բազմաթիւ են Աստծոյ Սուրբ Հոգով վկայութիւնները Սուրբ Խաչի մասին՝ սկսած Աստուածաշունչ Մատեանից մինչեւ սուրբ եւ հոգեւոր Հայրեր: Քրիստոնէութեան բոլոր դարերում բազմաթիւ են վկայութիւնները Սուրբ Խաչի միջոցով եղած աստուածային բժշկութիւնների, հրաշքների եւ յայտնութիւնների:

«Տէ՛ր, Քեզանից երկիւղ կրողներին Դու նշան տուեցիր…» (Սղմ. 59:6): Քրիստոս բացայայտ ասաց, որ Իր միւսանգամ գալուստը պէտք է փառաւոր կերպով լինի, որ պէտք է ուղեկցուի ամբողջ երկնքով մէկ երեւացող Խաչի նշանով. *«Եւ ապա երկնքի վրայ մարդու Որդու նշանը պիտի երեւայ, ու այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն եւ պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զօրութեամբ եւ բազում փառքով»* (Մատթ. 24:30):

Գիւտ Խաչի տօնը մեզ համար մեր ներսում Քրիստոսի նկատմամբ հաւատքն ու սէրը նորոգելու առիթ է, մեր ներքին մարդու շարունակական նորոգման խոկում: Մեր ներսում պէտք է շարունակուի հոգեւոր պեղումը Աստծոյ խօսքով, աղօթքով եւ Սուրբ Հոգու ներգործութեամբ՝ ջերմ պահելով մեր սիրտը Տիրոջ հետ հարաբերութեան մէջ: Անգամ մեր անձի պարզ խաչակնքումը մեզ հոգեւոր ապրումի նոր զօրացնող ալիք պէտք է բերի, ինչպէս գրում է Սուրբ Յովհան Ոսկեբերան հայրապետը.

«Եվ, այսպէս, պատկերի՛ր Խաչը նախ մտքիդ եւ հոգուդ վրայ, քանզի երբ Խաչը մեզ հետ է, ապա դեւերը սարսափելի ու վտանգաւոր չեն, իսկ մահը մահ չէ, այլ քուն: Խաչով բոլոր թշնամիները պարտուած ու կոխկրտուած են: Այդ պատճառով Խաչը մեր պարծանքն է, բոլոր բարիքների սկիզբը, մեր համարձակութիւնն ու զարդարանքը»:

Թող խաչեալ եւ յարուցեալ Քրիստոս Իր Սուրբ Խաչի հովանու տակ՝ խաղաղութեան մէջ պահի ամենքիս, Խաչով փրկի երեւացող եւ աներեւոյթ թշնամիներից եւ արժանացնի Սուրբ Երրորդութեանը զոհութեամբ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2025 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

27 October	Sts. Anastasius the Priest, Varus, Theodota and her sons, and those who were martyred with her Proverbs 3:1-6; Jeremiah 17:7-8; 2 Timothy 2:3-10; Matthew 19:27-29
28 October	Huperichians who were martyred at Somosata, and Sts. Severianus of Sebastia, Babylas the Elders and his 84 disciples Proverbs 12:8-13; Isaiah 49:8-11; 2 Corinthians 4:6-14; Luke 10:21-24
29 October	Galatians 5:16-26; Luke 7:36-48
30 October	St. John Chrysostom (Vosgeperan) Isaiah 49:1-6; Acts 20:25-38; John 15:17-25
31 October	Galatians 6:1-13; Luke 8:4-16
1 November	All Saints—old and new, known and unknown Wisdom 3:1-8; Isaiah 33:5-8; Hebrews 11:32-12:2; Luke 12:4-9

Feast of the Discovery of the Holy Cross

The Feast of the Discovery of the Holy Cross is one of the four feasts dedicated to Christ's Holy Christ.

In 327 AD Heghineh, the Mother of the Byzantine King Kostandianos, visits Jerusalem with the aim to search the holy Cross of the lord. A Jew, named Judas, helps the King's mother to search the site where Christ was crucified – Golgotha. In the result of searches the wooden crosses of Christ and the two criminals crucified together with him are found. For recognizing the Lord's Cross, the remains of a young man are put on the crosses in turn. On one of the crosses the young man rises to life and thus the Lord's Cross is identified. After that miracle the Jew converts to Christianity and later becomes the Bishop Cyril of Jerusalem. After the discovery of the Holy Cross Heghineh renovates the Holy Places of Jerusalem and builds the Church of Holy Resurrection of Golgotha, where later the Lord's cross is installed.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

- By Mr & Mrs Setrag and Jacqueline Karanfilian and Family for the souls of their Parents / Grandparents **Khoren** and **Ovsanna Karanfilian** (Խորէն և Ովսաննա Գարանֆիլեան), and for the soul of their Brother / Uncle **Dr Hrant Karanfilian** (Տոքթ Հրանդ Գարանֆիլեան), and for all the old and new deceased members of the **Karanfilian** and **Stanboulian** (Գարանֆիլեան և Ստանպուլեան) families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.
Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;
-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal
Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk